ԼԻԼԻԹ ԱԴԱՄՅԱՆ
LILIT ADAMYAN

ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԲԱՆԱԿՑԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ 2005-2006ԹԹ. (ՎԱՐՇԱՎԱ, ԿԱԶԱՆ, ՌԱՄԲՈՒՅԵ, ԲՈՒԽԱՐԵՍՏ)

2004 թվականից սկիզբ դրած Պրահյան գործընթացի շրջանակներում արտգործնախարարների հանդիպմանը զուգահեռ տեղի էին ունենում նախագահների հանդիպումներ: Դեռևս 2003 թվականի տարեվերջում Մինսկի խմբի համանախագահները ժամանեցին տարածաշրջան՝ նախապատրաստելու Քոչարյանի ու Իլհամ Ալիևի առաջին հանդիպումը, որն էլ կայացավ դեկտեմբերի 11-ին Ժնևում, որտեղ նախագահները երկուստեք մասնակցում էին Տեղեկատվական հասարակության համաշխարհային գագաթաժողովին:[1] 2004 ապրիլի 28-ին Եվրոպական տնտեսական ֆորումի շրջանակներում՝ Վարշավայում, տեղի ունեցավ Քոչարյան-Ալիև երկրորդ հանդիպումը: Իսկ նախագահների երրորդ հանդիպումը տեղի ունեցավ Ղազախստանի մայրաքաղաք Աստանայում սեպտեմբերի 15-ին ԱՊՀ գագաթաժողովի օրերին: 2005թ. մայիսի 15-ին Եվրոպայի խորհրդի գագաթաժողովի շրջանակներում Վարշավայում տեղի ունեցավ Քոչարյանի և Ալիևի չորրորդ հանդիպումը: Հանդիպման հաջորդ օրը՝ Հայաստանի նախագահը ելույթ ունենալով Եվրոպայի Խորհրդի երրորդ համաժողովում հայտարարեց, որ տեսնում է ղարաբաղյան հակամարտության կարգավորման հեռանկարները եվրոպական արժեքները հարգելու համատեքստում. <<Հայաստանում հավատում են բաց սահմաններով, առանց շրջափակումների, առանց բռնությունների. առանց փախստականների Եվրոպային: Այն Եվրոպային, որտեղ հարգում են մարդու իրավունքները և ժողովուրդների ազատ ընտրության իրավունքը, որտեղ ներկան կառուցվում է անցյալի օբյեկտիվ գնահատման հիման վրա: Այդ համատեքստում ենք մենք տեսնում ղարաբաղյան հակամարտության կարգավորումը, իսկ ավելի կոնկրետ՝ դե-ֆակտո կայացած Լեռնային Ղարաբաղի Հանրապետության եվրոպական ինտեգրման գործընթացերում ներգրավման ձևաչափի որոնման

[1] Ի դեպ հակամարտության հիմնական կողմը՝ Լեռնային Ղարաբաղը, շարունակում էր մեկուսացված մնալ բանակցային գործընթացից: Ստեփանակերտի ներգրավվածությունը սահմանափակվում էր միջնորդների՝ Լեռնային Ղարաբաղ ամենակ առ ժամանակ այցերով: Քոչարյան-Ալիև հանդիպումներից առաջ կամ հետո Լ.Ղ.Հ նախագահ Արկադի Ղուկասյանը ժամանում էր Երևան՝ տեղեկացվելու բանակցությունների մանրամասներին:

մեջ>>:[2]

Նախագահների հաջորդ հանդիպումը լինելու էր Կազանում, սակայն երբ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները հուլիսին այցելեցին տարածաշրջան Ռուսաստանցի միջնորդ Յուրի Մերզլյակովը Բաքվում լրագրողներին ասաց հետևյալը. <<Խաղաղության համաձայնագրի նախագիծը դժվար թե պատրաստ լինի մինչև օգոստոսին Կազանում Հայաստանի և Ադրբեջանի նախագահների հանդիպումը: Մենք այժմ աշխատում ենք կարգավորման սկզբունքների ձևակերպումների վրա>>:[3] Ռուս դիվանագետը վստահեցրել է, որ Ռուսաստանը կարգավորման առանձին ծրագիր չունի, իսկ Մոսկվայի դիրքորոշումը չի տարբերվում Մինսկի խմբի մյուս համանախագահ երկրների մոտեցումներից: Իսկ Ամերիկացի համանախագահ Սթիվեն Մանը, խաղաղության փաստաթղթի ժամկետների մասին արտահայտվել է փիլիսոփայորեն. <<Խաղաղության համաձայնագիրը կարող է պատրաստվել ինչպես մոտակա ամիսներին, այնպես էլ մոտակա հարյուրամյակում>>[4]:

Համանախագահների տարածաշրջան այցին համընկավ «Ազատություն» ռադիոկայանի հրապարակումը, համաձայն որի կարգավորման բանակցություններում շատ հարցեր արդեն համաձայնեցված են և կողմերն աշխատում են համաձայնագրի վերջին մի քանի կետերի վրա: Դիվանագիտական շրջանակների բարձրաստիճան մի պաշտոնյա <<Ազատությանն>> ասել է, որ հակամարտությունը կարող է կարգավորվել այս տարի կամ հաջորդ տարվա սկզբներին: Աղբյուրը հայտնել է, որ այսօր ստեղծված բանակցային գործընթացը հիշեցնում է քիվեսթյան փուլը, երբ բոլորը մտածում էին, որ համաձայնությունը ձեռք է բերվել, և խնդիրը լուծվելու է մոտ ժամանակներում: Նրա կարծիքով, նմանօրինակ փուլ կարող է ձևավորվել օգոստոսին Կազանում, որտեղ ԱՊՀ ոչ պաշտոնական զագաթժողովի շրջանակներում Հայաստանի և Ադրբեջանի նախագահները կանցկացնեն բանակցությունների հերթական փուլը: Դիվանագիտական աղբյուրը նշել է, որ ղարաբաղյան կարգավորման բանալին կարող է դառնալ հանրաքվեն, որը կանցկացվի մոտակա 10-15 տարիներին, և Լեռնային Ղարաբաղի ժողովուրդն ինքը կորոշի իր ճակատագիրը, այսինքն՝ միանալ Հայաստանին, մնալ Ադրբեջանի կազմում կամ դառնալ անկախ: Հանրաքվեի տարբե-

---

[2] Տես՝ М. Агаджанян / Э.Асатрян / С.Минасян, Азербайджан против народа Карабаха: политико-правовые последствия агрессии и их влияние на перспективы региональной безопасности, Ереван, Наири 2006, стр. 242-243

[3] Տես՝ Карабахский экспресс, Ереван, Гаспринт, Де-Факто/Июль-Декабрь 2005, N3-4/ Приложение, стр 3

[4] Տես՝ Карабахский экспресс, Ереван, Гаспринт, Де-Факто/Июль-Декабрь 2005, N3-4/ Приложение, стр 3

բակն առաջարկվել էր դեռ մի քանի ամիս առաջ, բայց այն ժամանակ խոսք էր գնում հանրաքվեի մասին և Ադրբեջանում, և Լեռնային Ղարաբաղում, իսկ այժմ խոսքը հանրաքվեի մասին է, որը տեղի կունենա միայն ԼՂ-ում: Ընդ որում Ադրբեջանը փաստացի ճանաչում է ԼՂ-ի կարգավիճակը, այսինքն ինքնորոշման նրա իրավունքը: Լաչինը մնում է ԼՂ-ի վերահսկողության տակ: Ինչ վերաբերում է Հայաստանի վերահսկողության տակ գտնվող ադրբեջանական հողերին, ապա դրանք վերադարձվում են Ադրբեջանին՝ վերջինիս հանրաքվե անցկացնելու համաձայնության դիմաց: Դիվանագիտական աղբյուրի տեղեկատվությամբ, <<փուլային-փաթեթային>> ձևաչափը ներառում է նաև հայ-թուրքական հարաբերությունները, մասնավորապես հայ-թուրքական սահմանի բացման հարցը: Երբ կստորագրվի խաղաղության պայմանագիրը, Թուրքիան կբացի Հայաստանի հետ սահմանը, իսկ Ադրբեջանը կապաշրջափակի կոմունիկացիաները:[5]

Կազանում՝ ԱՊՀ ոչ պաշտոնական զագաթաժողովի շրջանակներում, **օգոստոսի 27-ին տեղի ունեցավ Քոչարյան-Ալիև հինգերորդ հանդիպումը**, որը շարունակվեց երկու ժամ: Բանակցություններից հետո նախագահները մամուլի համար հայտարարություն չարեցին և շտապեցին հիպոդրոմ՝ մասնակցելու ձիարշավին: Սակայն հայտարարություններով հանդես եկան ՀՀ և ԱՀ ԱԳ նախարարները:

Հայաստանի արտաքին գործերի նախարար Վարդան Օսկանյանը հայտարարեց, որ Հայաստանի և Ադրբեջանի նախագահների միջև Կազանում տեղի ունեցած բանակցությունների ընթացքում ոչ մի առաջընթաց չի գրանցվել: Այնուհանդերձ հայկական կողմը դրական է գնահատում հանդիպման արդյունքները, քանզի այն դաշտ է բացում շարունակելու բանակցությունները նախարարների մակարդակով:[6] Իսկ Ադրբեջանի արտաքին գործերի նախարար Էլմար Մամեդյարովը Բաքվում մամլո ասուլիսի ժամանակ հայտարարեց, որ Հայաստանի և Ադրբեջանի նախագահների ցանկացած գրույց կարելի է համարել օգտակար և մեկ քայլով առաջ: Չնայած վաղ է դատել թե որքանով են կողմերը առաջ ընթանում այս հարցում: Կան շատ հարցեր, որոնք դեռ քննարկման ենթակա են:[7]

Չնայած դրան դեկտեմբերին ԵԱՀԿ գործող նախագահ Դիմիտրի Ռուպելը Լյուբլյանայում կազմակերպության արտգործնախարարների հանդիպման իր ելույթում ընդգծեց կարգավորման գործընթացում ձեռ

---

[5] Տես՝ Ազգ, 13 հուլիսի 2005 http://www.armtown.com/news/am/azg/20050713/20050713.01/

[6] Տես՝Карабахский экспресс, Ереван, Гаспринт, Де-Факто/Июль-Декабрь 2005, N3-4/ Приложение. стр 15

[7] Տես՝Карабахский экспресс, Ереван, Гаспринт, Де-Факто/Июль-Декабрь 2005, N3-4/ /Приложение. стр 15

բերված առաջընթացը: Ռուպելը պնդում էր, որ հակամարտության կողմերը կարգավորման եզրին են և 2006 թվականը ռեալ հնարավորություն է տալիս ամրապնդելու կատարված աշխատանքը: Արտգործնախարարների հանդիպման մասնակիցներն ընդունեցին հայտարարություն՝ նշելով Պրահայի գործընթացի շրջանակներում ձեռք բերված առաջընթացը, կողմերին հորդորելով բանակցություններից անցում կատարել որոշումների կայացմանը:[8]

Եվրախորհրդի գլխավոր քարտուղար Թերի Դևիսը նույնպես կարծում էր որ 2006 թվականը կարող է դառնալ Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման հնարավորության տարի: Դեևիսի կարծիքով՝ խնդրի կարգավորումը կախված է Հայաստանի և Ադրբեջանի նախագահներից, հատկապես, որ երկու երկրներում այս տարի չկան ընտրություններ:[9] Ու թեպետ արդեն մի քանի տարի է ինչ եռակողմ բանակցությունները փոխարինված են ԱՀ և ՀՀ նախագահների հանդիպումներով, այնուհանդերձ պետք է նշել այն կարևոր հանգամանքը, որ ԼՂՀ ժողովուրդը իր մասին որևէ փաստաթուղթ ստորագրելու մանդատ չի տվել ոչ ՀՀ և ոչ էլ ԱՀ նախագահին:[10]

Ռամբուեի և Բուխարեստի բանակցություններ. 2006 թվականը **«բաց պատուհանի» տարի** էր: Հայաստանը և Ադրբեջանն ազատ էին նախագահական ընտրություններից և միջազգային հանրությունը հույսեր ուներ, որ հնարավոր է հասնել գոնե միջանկյալ կարգավորման:

Քի Վեսթի ձախողումից հետո շուրջ հինգ տարի անց Ֆրանսիայի նախագահ **Ժակ Շիրակը** նս մեկ փորձ արեց մերձեցնել կողմերի դիրքորոշումները: **2006 թվականի փետրվարի 10-11-ը նախ Ելիսեյան** պալատում նա հանդիպումներ ունեցավ **Քոչարյանի, ապա՝ Ալիևի հետ,** որից հետո Հայաստանի և Ադրբեջանի ղեկավարներն ուղևորվեցին մայրաքաղաքի մերձակա Ռամբույե ամրոց: Այդ առիթով ԵԱՀԿ Մինսկի խմբի ֆրանսիացի համանախագահ Բեռնար Ֆասիեն, բանակցությունների հավանական ելքի մասին խոսելիս, հանդես եկավ հույսով լի հայտարարությամբ թե «Կարող է ընդունվել Ղարաբաղի շուրջը գրավյալ տարածքներից հայկական զորքերին փուլային դուրսբերման սկզբունքը, ինչպես նաև ապագայում Ղարաբաղի բնակչության հանրաքվեն՝ Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի վե-

---

[8] Տես՝ ԵԱՀԿ կայք՝ http://www.osce.org/mc/17357 Statement on the conflict dealt with by the OSCE Minsk Group

[9] Տես՝ ժամանակ, 26 հունվար 2006 http://www.zhamanak.com/article/2122/

[10] Տես՝ Մանասյան Ա., Ղարաբաղյան հակամարտության իրավաքաղաքական փաստերի և փաստարկների նվազագույն փաթեթ, Երևան 2008, էջ 14

բաբերյալ: Դա կկատարվի այն ժամանակ, երբ կկարողանան իրենց կամքն արտահայտել Ղարաբաղի հայ և ադրբեջանցի բոլոր բնակիչները>>:[11]

Սակայն Հայաստանի և Ադրբեջանի նախագահների մակարդակով Ռամբուեի բանակցություններում հաջողություն չարձանագրվեց: Քոչարյան-Ալիև բանակցությունները, ընդհանուր առմամբ, տևեցին չորս ժամ, իսկ ակնկալվող առաջընթացը մնաց անհասանելի: Ըստ «Ազատություն» ռադիոկայանի՝ բանակցություններին մոտ կանգնած աղբյուրներից մեկը հայտնել է, որ կողմերին չի հաջողվել առաջընթացի հասնել Քելբաջարի և Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի հարցերում:[12]

Ադրբեջանի արտգործնախարար Էլմար Մամեդյարովը մեկնաբանելով բանակցությունների արդյունքները, հայտարարեց, որ նախագահները համաձայնության եկան քննարկված ինը հարցերից յոթում: Համաձայն ԱՀ ԱԳՆ ինֆորմացիայի՝ չհաջողվեց համաձայնության գալ միայն իրենց բնակության նախկին վայրեր փախստականների և բռնի արտագաղթածների վերադարձի և Ադրբեջանի տարածքային ամբողջականության հարցերում, քանի որ Ադրբեջանը չի համաձայնի ոչ մի տարածքային զիջման հօգուտ Հայաստանի:[13]

Միևնդեռ Հայաստանի արտգործնախարար Վարդան Օսկանյանի կարծիքով՝ չարժե չափազանց դրամատիկացնել բանակցային գործընթացը: Այդ, Հայաստանի և Ադրբեջանի նախագահների միջև բանակցություններում չհաջողվեց համաձայնության գալ պետությունների ղեկավարների բանակցային սեղանին դրված հարցի առնչությամբ: Սակայն չարժեր ակնկալել, որ նախագահները համաձայնության կգան հենց Ռամբուեում, քանի որ նրանց առջև դրված հարցը շատ բարդ էր: Այդուհանդերձ, դա ոչ մի դեպքում չի ստվերում նախկին նվաճումները և չի նշանակում, որ այս տարվա ընթացքում առաջընթաց չի լինի: Օսկանյանը հրաժարվեց նշել, թե ստույգ ինչ հարցեր են քննարկվել, և հիշեցրեց, որ որքան կողմերը մոտենում են համաձայնագրի կնքմանը, այնքան ավելի դժվար է դառնում բանակցային գործընթացը: Նա ավելացրեց, որ բանակցություններին ԼՂՀ անմիջական մասնակցության հարցն օրակարգում չէ, բայց շեշտեց, որ ինքնահռչակված հանրապետությունը չպետք է հետընթաց քայլ անի իր ներկա կարգավիճակից: <<Լեռնային Ղարաբաղի հարցը միշտ էլ գտնվել է քաղաքական հարթության վրա, բայց իրավական և պատմական ասպեկտները միշտ քննարկվել են և հիմք են ծառայել քաղաքական որոշումներ

---

[11] Տես՝ Карабахский экспресс, Ереван, Гаспринт, Де-Факто/Январь-Март 2006, N1(5)./ Приложение, Стр 47

[12] Տես՝ նուն տեղում

[13] Տես՝ նույն տեղում

ընդունելու համար>>:[14]

Իր հերթին Ռամբուեի բանակցությունների վերաբերյալ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահությունը հանդես եկավ հայտարարությամբ, որում նշվեց, որ <<Չնայած ինտենսիվ քննարկումներին, կարգավորման որոշ զգայացունց սկզբունքային հարցերում կողմերի դիրքորոշումները մնացին նույնը, ինչպիսին վերջին ամիսներին էին>>:[15] Սակայն համանախագահները շարունակում են մնալ այն կարծիքին, որ խնդիրների խաղաղ կարգավորումը և օրվա հրամայականն է, և իրագործելի հարց, իսկ 2006թ. նպաստավոր տարի է այդ առաջընթացը ապահովելու:[16]

Եվ որպեսզի հաստակորեն ցույց տան, որ 2006թ. Լեռնային Ղարաբաղի հարցով համաձայնության գալու հնարավոր անհրաժեշտ պատուհանն է, մայիսին **Մինսկի խմբի** համանախագահող երկրների ներկայացուցիչներն իրենց արտաքին գործերի ***փոխնախարարների մակարդակով*** **առաջին անգամ համատեղ այց կատարեցին տարածաշրջան:** Պատվիրակությունը, որի կազմում էին Ռուսաստանի Դաշնության փոխարտգործնախարար Գրիգորի Կարասինը, ԱՄՆ փոխպետքարտուղար Դենիել Ֆրիդը և բարձրաստիճան ֆրանսիացի դիվանագետ Պիեր Մորելը, որը ներկայացնում էր Ֆրանսիայի արտգործնախարարության քաղաքական հարցերով տնօրեն Ստանիսլավ Լաբուլեին, երկու երկրների նախագահներին հայտնեցին, որ համանախագահող երկրներն ակնկալում են, որ նախագահները կօգտագործեն կարգավորման հիմնական սկզբունքների շուրջ համաձայնության հասնելու հնարավորությունը հունիսի սկզբին Բուխարեստում կայանալիք հանդիպման ժամանակ: Քանի որ Ռամբուեում բանակցությունները փակուղի էին մտել, միջնորդները Բուխարեստի նախօրեին փաստաթղթում նորամուծություն մտցրեցին.

Հունիսի 4-ին Ռումինիայի մայրաքաղաքում սկսվում և հաջորդ օրը շարունակվում են Քոչարյան-Ալիև բանակցությունները, սակայն նախագահներին չի հաջողվում հաղթահարել սկզբունքային տարակարծությունները: Հանդիպումից հետո բանակցությունների բովանդակությունը չեն մանրամասնել ոչ Հայաստանի և Ադրբեջանի նախագահները: Ի տարբերություն նախորդ հանդիպումների այս անգամ ԵԱՀԿ ՄԽ համանախագահներն անգամ խուսափել են գնահատականն տալ բանակցություններին ու ասել՝ առաջընթաց էր դա, թե ոչ: Սակայն **Վիեննայում՝ ԵԱՀԿ Մշտական խորհրդի նիստում, հունիսի 22-ին** համանախագահները դիմեցին

---

[14] Տես՝ Карабахский экспресс, Ереван, Гаспринт, Де-Факто/Январь-Март 2006, N1(5)/ Приложение,Стр 49

[15] Տես՝ նույն տեղում,էջ 48

[16] Տես՝ ԵԱՀԿ կայք http://www.osce.org/msg/47397

անանախադեպ քայլի՝ փաստացի զաղտնազերծելով այն փաստաթուղթը, որի շուրջ նախագահները չէին կարողացել համաձայնության գալ Ռամբույեում և Բուխարեստում:

Հայտարարության մեջ մասնավորապես ասվում է. <<Անցած տարվա նոյեմբերին ԵԱՀԿ Մինսկի Խումբը զեկուցեց այս խորհրդին, որ Լեռնային Ղարաբաղի հակամարտության երկու կողմերը հակված են բանակցային փուլից անցում կատարել դեպի որոշում ընդունելու փուլ և այն, որ հակամարտության կարգավորման պատմական հնարավորություն կա 2006թ.-ին: Վերջին 7 ամիսների ընթացքում մենք ակտիվացրել ենք մեր միջնորդական աշխատանքներն ու ջանք չենք խնայել, որ երկու կողմերը համաձայնության գան խնդրի կարգավորման հիմնական սկզբունքների շուրջ: Մենք միասին երեք անգամ եղել ենք Բաքվում և Երևանում և մի քանի անգամ առանձին այցեր ենք կատարել, կազմակերպել ենք երկու հանդիպում Հայաստանի և Ադրբեջանի արտգործնախարարների միջև և երկու վեհաժողով նախագահներ Քոչարյանի և Ալիևի միջև. առաջինը փետրվարին Ռամբույեում, իսկ երկրորդը հունիսի սկզբին Բուխարեստում: 1997թ.-ից ի վեր, ինչ գործում է Մինսկի խմբի համանախագահության ընթացիկ ձևաչափը, առաջին անգամ համանախագահող երկրների ներկայացուցիչները արտաքին գործերի փոխնախարարների մակաղարկով, մայիսին համատեղ այցով եղան տարածաշրջանում... Մեր փոխնախարարները նախագահներ Քոչարյանին և Ալիևին առաջարկեցին հիմնարար սկզբունքների մի փաթեթ, որը, մեր կարծիքով, արդարացի է, հավասարակշռված, գործունակ ու երկու կողմի համար կարող է ճանապարհ հարթել կարգավորման հեռանկարային համաձայնագրի մշակման համար: Մենք շարունակում ենք հավատալ այս սկզբունքներին ու կոչ ենք անում նախագահներին այն ընդունել որպես հիմք համաձայնության համար: Ցավոք, այդպիսի համաձայնության նախագահները Բուխարեստում չեկան: Որպես այս գործընթացի միջնորդներ, մենք չենք խախտի նրանց դիվանագիտական երկիխոսության գաղտնիությունը, քանի որ մենք շարունակում ենք հուսալ, որ նրանք համաձայնության կգան: ...Նշենք, որ համանախագահող երկրների կողմից երկու նախագահներին առաջարկված սկզբունքներն անօդ տարածությունում չեն մշակվել, այլ հանդիսանում են մեր նախորդների կողմից մշակված ավելի քան 9 տարվա մանրամասն առաջարկների արդյունքը: Չնայած կողմերն այդ առաջարկները չեն ընդունել, մեր նախորդների աշխատանքը մեզ համար կարևոր հիմք է հանդիսանում: Մեր մոտեցումը վերանայվել է. մենք չենք փորձել մի փուլով կարգավորել հակամարտության բոլոր ասպեկտները: Դրա փոխարեն մենք առաջնորդվել ենք այն սկզբունքով, որ հասնենք նշանակալի առաջընթացի,

սակայն մի քանի չափազանց դժվար հարցերի կարգավորումը թողնել ապագային ու նախատեսել հետագա բանակցություններ: Այսինքն, գործնական ու հավասարակշռված կերպով կարգավորվում են այն հարցերը, որոնք կարող են անմիջապես կարգավորվել:

Այս սկզբունքները ներառում են հայկական զորախմբերի փուլային հանումը Լեռնային Ղարաբաղը շրջապատող ադրբեջանական տարածքներից հատուկ մոտեցում ցուցաբերելով Քելբաջարի ու Լաչինի շրջանների նկատմամբ: Դրան հետևելու է այս տարածքների ապառազմականացումը: Լեռնային Ղարաբաղի վերջնական իրավական կարգավիճակը որոշելու համար ապագայում նախատեսվում է հանրաքվե կամ համընդհանուր քվեարկություն անցկացնել, որի ժամկետը սահմանված չէ: Կողմերը պարտավորվելու են շարունակել բանակցությունները այդ հանրաքվեի ժամկետն ու ձևաչափը որոշելու համար: Որոշակի միջանկյալ պայմանավորվածություններ կլինեն, որոնք կապահովեն Լեռնային Ղարաբաղի շփումը միջազգային աջակցություն ցուցաբերողների հետ: Կտեղակայվեն միջազգային խաղաղապահ ուժեր: Կստեղծվի համաձայնագրի իրականացման հարցերով համատեղ հանձնաժողով: Միջազգային ֆինանսական աջակցություն կապահովվի ականազերծման, վերականգնողական աշխատանքների ու ներքին տեղահանվածներին նախկինում օկուպացված ու Լեռնային Ղարաբաղի պատերազմից տուժած տարածքներում վերաբնակեցնելու նպատակով: Կողմերը հրաժարվում են ուժ կիրառելուց կամ այդպիսի սպառնալիքներ ներկայացնելուց, ու ապահովում են միջազգային ու երկկողմ անվտանգության երաշխիքներ ու հավաստիացումներ: Լեռնային Ղարաբաղի իրավական կարգավիճակի որոշման նպատակով անցկացվելիք հանրաքվեի կամ համընդհանուր քվեարկության զաղափարի մասով կուզեայինք նշել, որ դա պետք է լինի երկու կողմերի բանակցային համաձայնության արդյունքը: Պետք է լինեն համապատասխան նախադրյալներ, որպեսզի քվեարկությունն անցկացվի մի միջավայրում, որտեղ չկա պարտադրանք, իսկ իրազեկ քաղաքացիներն ունեն իրենց դիրքորոշումները կշռադատելու լայն հնարավորություններ հրապարակային եռանդուն բանավեճերից հետո:

Սա այն էր, ինչ մենք առաջարկել էինք երկու նախագահներին, բայց նրանց չհաջողվեց համաձայնության գալ: Չնայած դրան, մենք բավարարված ենք երկու կողմերից լսել ենք, որ նրանք երբեք այսքան մոտ չեն եղել համաձայնությանը: Սա հնարավորության որոշակի կորուստ կլինի երկու նախագահների համար, եթե նրանք թույլ տան, որպեսզի 2006-ին այս հնարավորության պատուհանը փակվի առանց անգամ համաձայնության գալու Լեռնային Ղարաբաղի հանրաքվեի պայմանագրի հիմնական

սկզբունքների շուրջ: Ինչպես դուք գիտեք, 2007 և 2008 թթ. ընտրություններ են նախանշվում նախ Հայաստանում, ապա նաև Ադրբեջանում: Մենք անցյալում տեսել եք, թե ինչ բացասական ազդեցություն կարող են ունենալ ազգային ընտրությունները բանակցությունների վրա և մենք շարունակում ենք հավատալ, որ հիմա է այն ժամանակը, երբ երկու նախագահները պետք է հանդես բերեն քաղաքական կամք միասին դեպի խաղաղություն խիզախ քայլ անելու համար:

Որպես համանախագահներ, մենք սպառել ենք մեր երևակայությունը այս սկզբունքները ճանաչելու, ձևակերպելու և վերջնական տեսք տալու մեջ: Մենք չենք հավատում, որ լրացուցիչ այլընտրանքային տարբերակները, որ առաջ կքաշվեն միջնորդների կողմից կողմերի հետ լրացուցիչ հանդիպումների ընթացքում, կբերեն այլ արդյունքների:...Եթե երկու կողմերը չեն կարող համաձայնության գալ այն սկզբունքների շուրջ, որ մենք առաջ ենք քաշել, մենք հավատում ենք, որ հիմա իրենցից է կախված աշխատել միմյանց հետ այլընտրանքային համաձայնության հասնելու համար, որը երկուսի համար էլ ընդունելի կլինի: Մենք պատրաստ ենք շարունակել օգնել նրանց: Մենք կարծում ենք, որ այս պահին կողմերին օգտակար կլինի թույլ տալ իրենց հանրություններին ներգրավվել առողջ քննարկումների մեջ այս հարցի վերաբերյալ առկա բազմաթիվ տեսակետների շուրջ: Մենք վստահ ենք, որ հասարակություններից ոչ մեկը չի ուզում հակամարտության վերսկսում, և մենք հորդորում ենք Հայաստանի և Ադրբեջանի ղեկավարներին աշխատել իրենց հասարակության և միմյանց հետ ձևակերպելու հիմնական սկզբունքների մի համաձայնագիր, որն ընդունելի կլինի երկուսի համար: Վերջին հաշվով, երկու կողմերն են, որ պատասխանատվություն կկրեն իրենց ժողովուրդների և միջազգային հանրության առջև, եթե նրանց գործողությունները հանգեցնեն պատերազմի և ոչ թե խաղաղության: Մենք անիմաստ ենք համարում այս պահին շարունակել վերջին մի քանի ամիսների մեր ինտենսիվ միջնորդային դիվանագիտությունը: Մենք նաև իմաստ չենք տեսնում նախաձեռնելու լրացուցիչ հանդիպումներ նախագահների միջև, մինչև նրանք չցուցադրեն մնացած անհամաձայնությունները հաղթահարելու բավարար քաղաքական կամք: Իհարկե, համանախագահները կշարունակեն մնալ հասանելի որպես միջնորդներ երկու կողմերին հավատարմորեն և անկողմնակալ կերպով ծառայելու համար: ...Մենք պատրաստ կլինենք նորից մասնակցել, եթե իրոք կողմերը որոշեն շարունակել բանակցություններն այն քաղաքական կամքով, որը մինչ այժմ բացակայել է>>:[17]

---

[17] Տես՝ Карабахский экспресс, Ереван,Гаспринт. Де-Факто/Апрель-Сентябрь 2006, N2-3 (6-7), стр 212-213

2006 թվականի դեկտեմբերի 10-ին, Լեռնային Ղարաբաղում անցկացվեց նոր՝ Սահմանադրության հանրաքվե: Երկրի Հիմնական օրենքի ընդունման օգտին քվեարկեց 98.58%-ը[18]: Սահմանադրության ընդունումն ունեցավ իր միջազգային արձագանքները: Ադրբեջանը և Թուրքիան դատապարտեցին կայացած հանրաքվեն: Միջազգային հանրությունը, այդ թվում՝ Եվրամիությունը և Եվրոպայի խորհուրդը, ինչպես Լեռնային Ղարաբաղում կայացած նախորդ քվեարկությունները, չճանաչեցին նաև Սահմանադրության օրինականությունը: ԵՄ-ի արձագանքը հետևյալն էր. <<ԵՄ-ն չի ճանաչում Լեռնային Ղարաբաղը, չի ճանաչում ոչ հանրաքվեն ոչ էլ արդյունքները>>:[19] Իսկ ԵԱՀԿ Մինսկի խումբն հետևյալ կերպ արձագանքեց. <<Միջազգային հանրության որևէ անդամ՝ ներառյալ համանախագահող երկրները, Լեռնային Ղարաբաղը չեն ճանաչել որպես անկախ պետություն: Լեռնային Ղարաբաղի ապագա ցանկացած կարգավիճակը պետք է որոշվի առանց ստատուսի կամ ուժի կիրառման և միայն որպես կողմերի միջև քաղաքական բանակցությունների արդյունք՝ Մինսկի գործընթացի շրջանակներում: Համանախագահները ակնկալում են, որ այս հանրաքվեի արդյունքները, որոնք միջազգայնորեն ճանաչված չեն, բացասական ազդեցություն չեն ունենա հակամարտության կարգավորման հիմնական սկզբունքների վերաբերյալ կողմերի միջև համաձայնության ձեռքբերման՝ երևան եկած հեռանկարների վրա>>:[20]

The negotiation process of the Nagorno-Karabakh Conflict settlement during the period 2005-2006 (Warsaw, Kazan, Rambue, Bucharest)

In April 2004, the co-chairmen of the OSCE Minsk Group managed to initiate what has come to be known as the "Prague Process". Along with the meetings between the Foreign Ministers of Armenia and Azerbaijan, the "Prague Process" also provided a framework for the Armenian and Azerbaijani presidents to hold several face to face conversations when both were attending international summit meetings. During this period, the Co-Chairs introduced a proposed set of Basic Principles for the peaceful settlement of the Nagorno-Karabakh Conflict to serve as the basis for the conclusion of an eventual peace agreement. The negotiations over the Basic Principles continued throughout 2005-2006 in Warsaw; Kazan; near Paris, at the Palace Rambue; Bucharest. Nonetheless the hope focused on the possibility that the parties would reach a settlement till the end of 2006 was not fulfilled. Actually a comprehensive peace agreement was at that time unlikely and particularly problematic given the upcoming presidential elections that were due to be held in both countries in 2007-2008.

---

[18] Տես՝ ԼՂՀ նախագահի կայք http://www.president.nkr.am/am/constitution/

[19] Տես՝ Եվրոպական Միության կայք/Press Releases-Declaration by the Presidency on behalf of the European Union , on the "constitutional referendum" in Nagorno Karabakh , on 10 December 2006 http://europa.eu/rapid/pressReleasesAction.do?reference=PESC/06/145&format=HTML&aged=0&language=EN&guiLanguage=en

[20] Տես՝ ԵԱՀԿ կայք՝ http://www.osce.org/pc/23259 Statement by the OSCE Minsk Group Co-Chairs on the 10 December referendum in Nagorno-Karabakh